

ՓԱՌԼՕ ԱՆԱՆԵԱՆ. ՍԿԱԻԱՌԱԿԻ ՎՐԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐԷՆ ՄԻՆ

ՀԱՅԿ ԱՌԱԳԵԱՆ
haigavakian@yahoo.com



Arrêtons-nous ici' (1907) և *Լա Թրավիատա* օփերայի ծայնագրությունը (1935)

Հայկական երաժշտական ծայնագրությունը ունի վաղ պատմություն:

1900ի Փարիզի Համաշխարհային Ցուցահանդէսի ծիրին մէջ, Փարիզի Մարդաբանական Ընկերութեան (Société d'Anthropologie de Paris) կողմէ Լէոն Ազուլայ, ոչ-առետրական նկատառումով, ֆոնոկրամի վրայ կը ծայնագրէ բազմաթիւ երկիրներու երաժշտութիւններ: Թիֆլիսէն թենոր Ամիրեան միաձայն (առանց նուագակցութեան) կը ծայնագրէ *Ձմեռն Անցաւ* եւ *Ծիծեռնակը*, մեզի աւանդ ձգելով ինչ երգեցողութեան ազատ եւ ոլորուն ոճի գեղեցիկ ճաշակի վաղագոյն նմոյշ մը:

Ըստ Տոքթ. Երթան Թիւրքիլմազի, հայկական առաջին առետրային ծայնագրութիւնը կատարուած է 1901ին, Սենթ Փեթերսպուրկ, Կոմիտաս վարդապետի *Կոռնկով*²:

1902ին Կրամֆօն Ընկերութիւնը (Gramophone Company) մուտք կը գործէ Թիֆլիս՝ ծայնագրելու համար տեղական երաժշտութիւնը: Հայկական երաժշտութենէն կը ծայնագրէ Եկմալեանի *Տէր Ողորմեան*՝ երգչախումբ, *Յորժամ* եւ *Էս Գիշեր*՝ Նէրսիսեան հոգետր դպրոցի երգչախումբ, *Լեզգիներ*՝ թառ եւ քամանչա, *Լորիկ*՝ Արշակ Կոստանեան, *Մայր Արաքսի Ափերով*՝ Կրասնիկեանց եւն.:

1905ին, բոլորովին այլ միջավայրի մէջ՝ Փարիզ, նշանակալի թափով Փաղօ (Փոյ) Անանեան կը սկսէր իր ծայնագրութիւններուն շարքը, հանդիսանալով առաջին հայ կատարողը՝ որ յաջողած է ծայնագրել հետետղականօրէն, թէեւ միշտ մնալով յատկապէս ֆրանսական, այլեւ իտալական եւ գերմանական օփերաներու ոլորտին մէջ:

Անանեան ունեցած է երգային բամբ ծայն մը՝ ճկուն ու գալարուն հնչերանգով: Ծնած է Պոլիս, 1879 Մարտ 8ին³: Յայտնի չէ՝ երբ գաղթած է Ֆրանսա: 1905-08՝ եղած է Ֆրանսայի Մոնթ Քարլո Օփերայի Թատրոնի մեներգիչ, ուր, ի միջի այլոց, ելոյթ ունեցած է Մաւրնէի *Եղեղ* եւ Քաւիէ Լըրույի *Թէոփորա* օփերաներու առաջնեկ բեմադրութիւններուն մէջ: Այս շրջանին է որ կատարած է իր միակ սթիստիօ ծայնագրութիւնները Փարիզի մէջ:

Ի. դարակիզըին, Միացեալ Նահանգներ մեծ թափով կը ջանար ունենալ իր սեփական մշակութային արտադրութիւնը: Օփերայի ոլորտին համար, Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոնը ամէն տարի երոպայի մէջ ունկնդրութիւններ կը կազմակերպէր եւ կ'ընտրէր կարող մեներգիչներ որպէսզի դառնային իր մնայուն արուեստագէտները: Այս ծիրին մէջ է որ Անանեան 1908ին կ'ընտրուի Մեթրոփոլիթընի մեներգիչ եւ Հոկտեմբերի վերջ կը հասնի Նիւ Եորք:

ԱՄՆի մէջ, թանի մը տարի ետք իր ֆրանսերէն Փոլ անունը կը դառնայ իտալերէն Փառլօ: 1926ին ամերիկեան կառավարութեան կը ներկայացնէ հպատակութեան դիմում, զոր կը ստանայ 1933ին:

1908 Նոյեմբեր 14ին կ'ունենայ առաջնեկ ելոյթը Մեթրոփոլիթընի հետ, Brooklyn Academy of Musicի մէջ, նշանատրելու համար վերջինիս վերաբացումը: Կը կատարէ Շարլ Կունտի *Ֆաուսթ* օփերայի Վակների դերերը՝ Էնրիքօ Քարուզոյի եւ Ճերակտին Ֆարրարիի հետ: Բուն Մեթրոփոլիթըն Թատրոնի բեմին վրայ առաջին ելոյթը կը կայանայ Նոյեմբեր 20ին, *Լա Թրափաթայի* Մարիզ Օպինյիի դերով, դարձեալ Քարուզոյի գլխատոր դերակատարութեամբ:

Այսպէս, ան առաջին հայն էր՝ որ ելոյթ կ'ունենար Մեթրոփոլիթընի հետ, արձանագրելով 1641 ելոյթ՝ բեմադրութիւններու թէ երգահանդէսներու մէջ: Վերջին ելոյթը կ'ըլլայ 1935 Ապրիլ 12ին, նուագավար Ուալթըր Տամրոշի ոսկեայ յօրեղանին նուիրուած երգահանդէսին⁴:

1920-31՝ Անանեան գրեթէ ամէն տարի կը իրաւորուի մասնակցելու Ռաիինա Օփերայի ամառնային բեմադրութիւններուն⁵: Երկու թատերաշրջան՝ 1923-25, ելոյթ կ'ունենայ Սան Ֆրանսիսքո Օփերայի ներկայացումներուն⁶: ԱՄՆի մէջ երբեմն մասնակցած է հայկական ծոնարկներու:

2270
A-217102

UNITED STATES OF AMERICA
DECLARATION OF INTENTION
To be filled out for all persons seven years after the date hereof

I, Paul Ananian, aged 47 years,
residence Paris, France, do declare on oath that my personal
description is Color Black, complexion Dark, height 5 feet, 8 inches,
weight 155 pounds, color of hair Brown, color of eyes Brown,
other visible distinctive marks None
I was born in Paris, France, on the 20th day of March, 1879, at Paris, France. I am single
at 47 years, 8 months, 11 days, New York City, N. Y.

I emigrated to the United States of America from Paris, France. I may not
on the vessel de Normandie. I am not a subject of any foreign
Foreign nationality was French, France. I am not a subject of any
of my wife is 102 years old.
and now resides at
It is my true intent to renounce here all allegiance and fidelity to any foreign
prince, potentate, state or sovereignty, and to become a citizen of the United States of
America and (or) the Republic of America. I am not a subject of any
I arrived at the port of New York, N. Y., on or about the 10th day of
State of France, Paris, France. I am not an anarchist: I am not a
polygamist, nor do I believe in the practice of polygamy. I am not a
to become a citizen of the United States of America, and I am not a
So help me God.

Subscribed and sworn to before me in the office of the Clerk of said Court
at New York City, N. Y., this 20th day of March, 1926.
New York City, N. Y.

Ամերիկեան հպատակութիւն
ստանալու դիմումագիրը, 1926

1931ին, Մեթրոփոլիթըն կը սկսի շաբաթօրեայ ցերեկային ծայնասի-
նոմները (Saturday Matinee Broadcasts), որոնք կ'արձանագրեն բացառիկ
յաջողութիւն եւ կը շարունակուին մինչեւ այսօր:

Կենդանի ծայնագրութեան սիրահար մը՝ Էտտարտ Ճ. Սմիթ (Edward J. Smith), իր անձնական հաւաքածոյին համար սկսած էր 78 շրջանով (rpm) մոմային զաններու վրայ ծայնագրել զանազան կենդանի կատարումներ: Մեթրոփոլիթընի ծայնասիւնոմները առիթ մը կը ներկայանան այս ծայնագրութիւններուն համար: Յետագային, Սմիթ զանոնք կը վերածէ 33 $\frac{1}{3}$ սկաւառակներու եւ կ'առետրականացնէ երեք յաջորդական պիտակ-
ներով՝ The Golden Age of Opera (1956-1971), Unique Opera Record Corporation (1972-1977) եւ A.N.N.A. Record Company (1978-1981), արտադրելով աւելի քան վեց հազար սկաւառակ եւ հանդիսանալով երաժշ-
տութեան պատմութեան ամենամեծ առեւտրային (pirate) ծայնագրու-
թիւններու հեղինակը⁷: Այստեղ, երեք անուն սկաւառակներու վրայ կը
գտնուի Անանեան, ծայնագրուած Մեթրոփոլիթընի ցերեկային ծայնասի-
նոմներէն: Այս սկզբնաղբիւրին հիման վրայ, յետագային կատարուեցան
այլ արտադրութիւններ՝ այլ ընկերութիւններու կողմէ, թէ՛ սկաւառակներու
եւ թէ՛ խտասալիկներու վրայ:

Անանեան կը մահանայ 1942ին⁸:

Ստորեւ կու տանք ցանկը Փաղօ Անանեանի ամբողջական ծայնագ-
րութիւններուն, որոնց տեղեկութիւններուն մեծ մասը քաղած ենք բուն
սկաւառակներէն.-

Ցանկ Փաղօ Անանեանի ամբողջական ծայնագրութիւններուն			
1	Eugène Diaz: <i>Benvenuto</i> , 'De l'art splendeur immortelle' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ Ապրիլ 1905 Արտաթիք 78 rpm Odeon 6270, մաթրիքս՝ P 1196	2	Richard Wagner: <i>Tannhäuser</i> , 'O douce étoile' [O du mein holder Abendstern] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1905 Արտաթիք 78 rpm Odeon 6274
3	Émile Paladilhe: <i>Patrie!</i> , 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1905 Արտաթիք 78 rpm Odeon 6284, մաթրիքս՝ P 1193	4	Hector Berlioz: <i>La damnation de Faust</i> , 'Voici des roses' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ Ապրիլ 1905 Արտաթիք 78 rpm Odeon 6285

5	Charles Gounod: <i>Faust</i> , 'Prenez mon bras un moment' (Quatuor) (1) (ֆրանսերէն) Սոփրանո՝ Lise Landouzy Մեծծո սոփրանո՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 56090, մաթրիքս՝ xP 3527	6	Charles Gounod: <i>Faust</i> , 'Eh quoi! toujours seule?' (Quatuor) (2) (ֆրանսերէն) Սոփրանո՝ Lise Landouzy Մեծծո սոփրանո՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 56091, մաթրիքս՝ xP 3528
7	Giacomo Puccini: <i>La bohème</i> , Quatuor (սկիզբ) (ֆրանսերէն) Սոփրանո՝ Lise Landouzy Մեծծո սոփրանո՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 56092, մաթրիքս՝ xP 3530	8	Giacomo Puccini: <i>La bohème</i> , Quatuor (վերջ) (ֆրանսերէն) Սոփրանո՝ Lise Landouzy Մեծծո սոփրանո՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 56093, մաթրիքս՝ xP 3531
9	Charles Gounod: <i>Faust</i> , 'Anges purs, anges radieux' (ֆրանսերէն) Սոփրանո՝ Lise Landouzy Մեծծո սոփրանո՝ Tina Lauger-Dubois Թենոր՝ Gaston Dubois Պաս՝ Paul Ananian Դաշնակահար՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 56094, մաթրիքս՝ xP 3532	10	Ambroise Thomas: <i>Mignon</i> , 'De son cœur j'ai calmé la fièvre' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ Սեպտեմբեր 1907 Արուսթիք 78 rpm Odeon X 60181, մաթրիքս՝ xP 3170
11	Jules Massenet: <i>Le jongleur de Notre-Dame</i> , 'Fleurissait une rose' (Légende de la sauge) (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ	12	Jules Massenet: <i>Thaïs</i> , 'Voilà donc la terrible cité!' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Ձայնագրութեան վայր՝ Փարիզ Ձայնագրութեան թուական՝ 1907

	Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60182, մաթրիքս՝ xP 3171	Աքուսթիք 78 rpm Odeon X 60183, մաթրիքս՝ xP 3172
13	Émile Paladilhé: <i>Patrie!</i>, 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60184, մաթրիքս՝ xP 3173	14 Giacomo Puccini: <i>La bohème</i>, 'O défroque si chère' [Vecchia zimarra] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1906-07 Աքուսթիք 78 rpm Odeon X 60194, մաթրիքս՝ xP 3206
15	Hector Berlioz: <i>La damnation de Faust</i>, 'Devant la maison' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60229, մաթրիքս՝ xP 3209	16 Adolphe Adam: <i>Le chalet</i>, 'Arrêtons-nous ici' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60230, մաթրիքս՝ xP 3210
17	Adolphe Adam: <i>Le chalet</i>, 'Chants de nos montagnes' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60231, մաթրիքս՝ xP 3211	18 Jules Massenet: <i>Manon</i>, 'Ne bronchez pas' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60236, մաթրիքս՝ xP 3229
19	Jules Massenet: <i>Thaïs</i>, 'Duo de l'oasis' (ֆրանսերէն) Սոփրանո՝ Mercier-Duprez Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1907 Աքուսթիք 78 rpm Odeon X 60257, մաթրիքս՝ xP 3228	20 Giacomo Puccini: <i>La bohème</i>, 'O défroque si chère' [Vecchia zimarra] (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1908 Աքուսթիք 78 rpm Odeon A 73003, մաթրիքս՝ P09
21	Émile Paladilhé: <i>Patrie!</i>, 'Pauvre martyr obscur' (ֆրանսերէն) Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1908 Աքուսթիք 78 rpm	22 Victor Massé: <i>Les noces de Jeannette</i>, Duo (ֆրանսերէն) Սոփրանո՝ Mercier-Duprez Պաս՝ Paul Ananian Նուագախումբ՝ անյայտ Զայնագրութեան վայր՝ Փարիզ Զայնագրութեան թուական՝ 1908

	Odeon A 73005		Արտաթիք 78 rpm Odeon A 75002
23	Giuseppe Verdi: <i>La traviata</i> (խաղերեն) Վայր՝ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 5 Յունուար 1935 (ցերեկային ձայնասփռում) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Ettore Panizza Սոփրանո՝ Rosa Ponselle (Violetta Valéry) Թենոր՝ Frederick Jagel (Alfredo Germont) Պարիթոն՝ Lawrence Tibbett) Giorgio Germont) Սոփրանո՝ Elda Vettori (Flora Bervoix) Թենոր՝ Angelo Badà (Gastone) Պարիթոն՝ Alfredo Gandolfi (Barone Doupohl) Պարիթոն՝ Millo Picco (Marchese d'Obigny) Պաս՝ Paolo Ananian (Dottore Grenvil) Մեծծո-սոփրանո՝ Henriette Wakefield (Annina) 33% սկառառակ E.J. Smith The Golden Age of Opera EJS 106 (3 սկ.), հրապարակում՝ 1956⁹ Metropolitan Opera Performances MOP 2 (2 սկ.) Pearl GEMM 235/236 (2 սկ.), հրապարակում՝ 1982 Խտասայիկ Pearl GEMM 9317 (+<i>Norma</i>, հատուածներ) (2 խտ.), հրապարակում՝ 1988 The Fourties FT 1513-14 Naxos Historical 8.110032-33 (2 խտ.), հրապարակում՝ 1998 Bensar OL 1535 (BRO 125868) (2 խտ.), հրապարակում՝ 2005 House of Opera CDNY5083, հրապարակում՝ 2008 House of Opera CD13142, հրապարակում՝ 2009	24	Charles Gounod: <i>Roméo et Juliette</i> (ֆրանսերեն) Վայր՝ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 26 Յունուար 1935 (ցերեկային ձայնասփռում) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Louis Hasselmans Թենոր՝ Charles Hackett (Roméo) Սոփրանո՝ Eidé Norena (Juliette) Պաս՝ Léon Rothier (Frère Laurent) Մեծծո-սոփրանո՝ Gladys Swarthout (Stéphano) Պարիթոն՝ Giuseppe De Luca (Mercutio) Թենոր՝ Max Altglass (Benvolio) Մեծծո-սոփրանո՝ Henriette Wakefield (Gertrude) Պարիթոն՝ Louis D'Angelo (Le Comte Capulet) Թենոր՝ Angelo Badà (Tybalt) Պարիթոն՝ Millo Picco (Le Comte Pâris) Պաս՝ Paolo Ananian (Grégorio) Պաս՝ Arthur Anderson (Le Duc de Vérone) 33% սկառառակ Unique Opera Recordings Corporation UORC 175 (2 սկ.), հրապարակում՝ 1973¹⁰ Խտասայիկ Encore Grand Tier ENGT 4/93 (2 խտ.) Naxos Historical 8.110140-41 (2 խտ.), հրապարակում՝ 2003 Bensar OL 12635 (BRO 125833) (2 խտ.), հրապարակում՝ 2005 House of Opera CDNY5125, հրապարակում՝ 2008

25	Giacomo Puccini: <i>La bohème</i> (Ա. և Գ. արարներ) (խաղերեն) Վայո՛ Մեթրոփոլիթըն Օփերայի Թատրոն Կատարումի թուական՝ 23 Մարտ 1935 (ցերեկային ծայնասփողմ) Նուագախումբ եւ երգչախումբ՝ Մեթրոփոլիթըն Օփերա Նուագավար՝ Vincenzo Bellezza Սոփրանո՝ Elisabeth Rethberg (Mimi) Թենոր՝ Frederick Jagel (Rodolfo) Սոփրանո՝ Nina Morgana (Musetta) Պարիթոն՝ Giuseppe De Luca (Marcello) Պարիթոն՝ Millo Picco (Schaunard) Պաս՝ Ezio Pinza (Colline) Պաս՝ Paolo Ananian (Benoît) Պաս՝ Pompilio Malatesta (Alcindoro) Պաս՝ Max Aliglass (Parpignol) Պաս՝ Carlo Coscia (Sergente dei doganieri) 33% սկաառակ E.J. Smith The Golden Age of Opera EJS 114 (1 սկ.), հրապարակում՝ 1957¹¹ խտասալիկ Walhall WHL 13 (+<i>La bohème</i>, հատուածներ) (2 խտ.), հրապարակում՝ 1995
----	---

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ ա. L. Azoulay, "Liste des Phonogrammes Composant le Musée Phonographique de la Société d'anthropologie," *Bulletins de la Société d'anthropologie de Paris*, V Série. Tome 3, 1902, էջ 654:

p. Centre de recherche en Ethnomusicologie, https://archives.crem-cnrs.fr/archives/collections/CNRSMH_I_1900_001/

Ամիրեանի երկու ծայնանգրութիւնները ունկնդրութեան համար ներկայիս մատչելի են Ազգագրա-երաժշտագիտական Հետազոտական Կեդրոնի (Centre de recherche en Ethnomusicologie) կայքէջին վրայ. https://archives.crem-cnrs.fr/archives/items/CNRSMH_I_1900_001_042/ եւ https://archives.crem-cnrs.fr/archives/items/CNRSMH_I_1900_001_043/:

² Taleen Babayan, "Musical Records: The Beat of Armenian Hearts around the World," *The Armenian Mirror-Spectator*, 5 Ապրիլ 2018:

³ Տե՛ս՝ հպատակութեան դիմումագիրին լուսապատճեր:

⁴ Մեթրոփոլիթըն Օփերայի բոլոր թեմադրութիւններուն մանրամասնութիւնները կարելի է գտնել անոր կայքէջին վրայ՝ <http://archives.metoperafamily.org/archives/frame.htm> :

⁵ Ռաինիայի ամբողջական ելոյթներուն համար տե՛ս՝ Robert C. Marsh, "The Annals of the Ravinia Opera, Part 2: 1917-1921," *Opera Quarterly*, 1997:13(4), էջ 123-39. նաեւ նոյն՝ "The Annals of the Ravinia Opera, Part 3: 1922-1926," *Opera Quarterly*, 1997:14(1), էջ 79-101:

⁶ Սան Ֆրանսիսքո Օփերայի բոլոր թեմադրութիւններուն մանրամասնութիւնները կարելի է գտնել անոր կայքէջին վրայ՝

<http://archive.sfopera.com/qry3WebCastlist.asp?pssearchall=on&pssearch=Ananian&pssearchtype=> :

⁷ William Shaman, William J. Collins and Calvin M. Goodwin, *EJS: Discography of the Edward J. Smith Recordings. The Golden Age of Opera 1956-1971*, Westport, London, Greenwood Press, 1994, էջ ix:

⁸ Արծուի Բախչինեան, Հայազգի Գործիչներ Հնագոյն ժամանակներից Մինչեւ Մեր Օրերը, Երևան, Զանգակ 97 Հրատ., 2002, էջ 24:

⁹ Shaman, Collins and Goodwin, էջ 14-16:

¹⁰ William Shaman, William J. Collins and Calvin M. Goodwin, *EJS: Discography of the Edward J. Smith Recordings: Unique Opera Records Corporation (1972-1977), A.N.N.A. Record Company (1878-1982), Special-Label Issues (circa 1954-1981), and Addendum to The Golden Age of Opera Series*, Westport, London, Greenwood Press, 1999, էջ 87-88:

¹¹ Shaman, Collins, Goodwin, *The Golden Age of Opera 1956-1971*, էջ 24:

PAOLO ANANIAN, ONE OF THE FIRST ARMENIAN CLASSICAL SINGERS
REGISTERED ON DISC
(Summary)

HAIG AVAKIAN

haigavakian@yahoo.com

Paolo Ananian (Istanbul, 1879–New York, 1942) started his bass soloist career in the opera of Monte Carlo, France. Later on he performed at the Metropolitan Opera, became a permanent soloist of the Ravenna Opera summer performances, performed in the San Francisco opera and performed in other places too.

As a soloist singer at the opera between 1905 and 1908 Ananian registered his performances on Odeon acoustic 78 rpm discs (all in all, 22 sides). Shortly after, he was recruited by the Metropolitan Opera, where between 1908 and 1935 he became a permanent soloist, and was the first Armenian who performed at the Metropolitan.

The Saturday Matinee Broadcasts of the opera were pirated and later on were traded and made public. Ananian had participated in three live opera recordings of the Metropolitan, namely *La Traviata*, *Roméo et Juliette* and *La Bohème*.